

ԱՆԱՆԻԱ ՆԱՐԵԿԱՑԻ

(Տ Ե Ս Ն Ե Բ Ո Ր Գ Գ Ե Բ)

ԳԻՐ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Մ Ի Ե Բ Ե Ն Ի

(ԵՐՏԵՏՊԵՄ 1892 Թ. .ԱՐԵՐԵՏ. ԱՄՍԵԳՐԻՑ)

ՎԱՆԱՐՇԱԴԱՏ

Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ւ Ի Պ Տ Ա Ր Ա Ն Ո Ւ Մ

1892

1800 100 100 100

1800 100 100 100



286-1(09)
2-55

ԱՆԱՆԻԱ ՆԱՐԵԿԱՑԻ

(Ե Լ Մ Ն Ե Բ Ա Բ Գ Դ Ե Բ)

9(47.025)153

ԱՅՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

ԳԻՐ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ

Հ Բ Ա Տ Ա Բ Ա Կ Ո Ւ Թ Ի Ն

Մ Բ Ե Բ Ե Ն Ե

(ԱՐՏԱՏՊԵԾ 1892 Թ. ԱՐԱՐԱՏ, ԱՄՍԵԳԻՑ)



ՎԱՂԱՐԵԱՊԱՏ

Մ Ա Յ Բ Ա Թ Ո Ռ Ի Տ Պ Ա Ր Ա Ն Ո Ւ Մ

1892

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

Ա Մ Ե Ն • Տ • Տ Ե Ղ Ա Կ Ա Լ Ի

Հ Ա Յ Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Ք Ե Ա Ն Հ Ա Յ Ո Յ :

A $\frac{\pi}{5815}$

Մեր ազգային պատմութեան նշանաւոր շրջաններից մէկն է Քոնգրակեցի կռուած աղանդաւորների շարժման շրջանը՝ իններորդ դարի առաջին կիսից մինչև տասն և մեկերորդ դարի երկրորդ կէսը, երկու ամբողջ դարից աւելի, Արևելքում ծագած աղանդների մէջ մասնաւոր ուշադրութեան արժանի են Պաւլիկեանների¹⁾ և սրանց յաջորդող Քոնգրակեցիների (նաև՝ Քուլայեցի) աղանդները, երկուսն էլ ծագած և սնած բուն Հայկական Հոգի վրայ, Աւշադրութեան արժանի է, որ Հայկական մտքի որ և է արտադրութիւն երբէք չունեցաւ քիչ թէ շատ զգալի ազդեցութիւն Հայ եւջ ազգային սահմաններից դուրս, այդ սահմանների մէջ Հաշուելով Անդրկովկասը՝ Վրաստանն ու Աղուանքը, ուրիշ մի քանի մանր գրացի ղեղերի Հետ: Մինչդեռ միակ բացառութիւնը այս կանոնից, Հայկական մտածողութեան միակ արտադրութիւնը՝ թէպէտ աղանդաւոր և Հակաուղղափառական մտածողութիւն, որը դուրս եկաւ Հայաստանի սահմաններից, ռարածուելով Հեռուն՝ Փոքր-Ասիա, Միջագետք, Բալկանեան թերակղզին, մասնաւորապէս Բուլղարիա, Միջին Նւբուպա, Հիւսիսային Իտալիա և Հասաւային Փրանսիա, այդ միակ Հայկականը, որ դարձաւ միջազգային և սահագին նշանակութիւն ստացաւ մարդկային ընդհանուր պատմութեան մէջ, այդ Քոնգրակեցիների աղանդն էր:

Մեր ազգային պատմութեան դասազրքերում այդ մասին գրեթէ ոչինչ է աւուում, իրրև թէ ոչինչ էլ եղած չը լինէր: Մինչդեռ առնուազն երկու դար շարունակ, եթէ ոչ աւելի, ամբողջ Հայ ժողովուրդը բաժառուած էր երկու բանակի, Մտքերը վրդովուած էին, մի կողմից ներելի և սններելի միջոցներով պաշտպանուում էր ուղղափառութիւնը, ոչ միայն սօսքով, քարոզութեամբ, այլ և բռնի ուժով, դահիճներով, կախաղանով:

1) Պաւլիկեանների աղանդը գոյութիւն ուներ դեռ ևս Է-դ դարում: Է-դ դարում ա՛նս Յովհան Օձնեցու ճառը ընդդէմ Պաւլիկեանց և կանոնները:

խարանով, հրով ու ջրով միւս կողմից ամենայն յամսոսութեամբ, առաջին դարերի քրիստոնեաներին վայել անվնհերութեամբ, ամեն նեղութիւնների և հալածանքների յանձնառութեամբ քարոզում և ծաւալում էր աղանդաւոր վարդապետութիւնը, Պող Այրարատից, Սմբատ, Սարգիս, Ասզար, Թորոս, Արքայ, Կիւրեղ, Յակոբոս եպիսկոպոս, Աունծիկ արեղայ, Տիկին Հրանդշ, Իշխան Արվես, Տիկնայք Ախնի և Աամարայ, մի ոմն առասպելախառն Տիկին Վարէ, մի ուրիշը՝ Տիկին Շեթի) և ուրիշ բազմաթիւ անուններ, մնացել են մեզ իրրե այդ աղանդի նշանաւոր գործիչների անուններ:

Չը նայելով Վագիստրոսի փրցումը խօսքերին և տմարգի հալածանքներին, մենք կարծում ենք, որ ոչ թէ հալածանքները վերջ գրին այդ աղանդին Հայաստանում, —ինչպէս յայտնի է այդ աղանդը շարունակեց իւր գոյութիւնը մինչև մեր օրերը Խնուսում և Ալեքսանդրապոլի գաւառում, —այլ Թուրք-թաթարական արշաւանքները ծածկեցին իրենց հեղեղի տակ՝ ինչպէս ամեն բան, նաև այդ աղանդը, որի հետևողների մեծ մասը իրենց պաշտպան իշխանների հետ տեղափոխուեցին դէպի արևմուտք, Ասորիք, Փոքր Ասիա և մասնաւորապէս Բուլղարիա: Բուլղարիան դարձաւ այդ աղանդի երկրորդ հայրենիքը, ուր և Բողոմիլ քահանայի անունով աղանդը կոչուեց Բողոմիլների աղանդ:

Միջին Ա. րոպայում՝ Կաթարացիները շարունակեցին նոյն աղանդը, իսկ հարաւային Փրանսիայում՝ Ալբրիգացիները (ալբրիժուանները), Այս վերջինների պատմութիւնը հանրածանօթ է և բոլորից լաւ ուսումնասիրուածը):

Այսպիսով Բեֆորմացիայի և բոլոր բողոքական—աւետարանական եկեղեցիների բուն նախահայրերը և հիմնադիրները դուրս եկան Հայաստանից: Դրանց պատմութեան ուսումնասիրութիւնը անաչառութեամբ և առանց մոլեռանդութեան անհրաժեշտ է ոչ միայն մեր ուղղափառ Հայկական ս. եկեղեցու պատմութեան իրրե լրացուցիչ մասն, այլ աւելի ևս իրրե հայ

1) Այս երկու վերջին անունները հանած ենք մի ձեռագրից, որը շուտով կը հրատարակենք:

2) Ալբրիգացիները ամբողջ կոչում էին Bougre, որ Բուլղար բառի աղջատուածն է և գործ էր ածուած հերետիկոսի նշանակութեամբ, այժմն էլ այդ բառը պահուած է Ֆրանսերէն լեզուում և խիստ յիշոց է և տղեղ անարգական խօսք: Բոլորովին անհիմն է նաև Կաթարցի մի քանի գրողների կարծիքը, ի թիւս որոց և Աւարլէիներ, որոնք կարծում են թէ և ալբրիգացիները տարածեցին իրենց աղանդը Բուլղարիայում և Բոսնիայում: մինչդեռ շարժմանը եղել է բոլորովին հակառակ ուղղութեամբ՝ արեւելքից դէպի արևմուտք, Թերևս մեզ յաջողութիւն էրր և իցէ այս նշանաւոր աղանդի ծագման և ծաւալման մասին գրել մանրամասն ուսումնասիրութիւն:

Տողևոր—մասոր կեանքի ինքնուրոյն արտայայտութիւն։ մեծ և նշանաւոր իւր հետեւանքներով։

Այստեղ մեր նպատակը չէ այդ նշանաւոր աղանդի վրայ նոյն իսկ հարեանցի անկարկ ձգելը։ Այս մի քանի խօսքը անհրաժեշտ էր առաջիկայ մեր հրատարակած Անանիա Նարեկացու «խոստովանութեան գրի» նշանակութիւնը ըմբռնել տալու համար մեր ընթերցողների մեծամասնութեանը։ Մագիստրոսի, Լաստիվերացու, Շնորհալու և ուրիշ գրողների մի քանի հարեանցի ակնարկներից և ընդհանուր ասացուածներից դուրս՝ մենք ոչինչ չունէինք այս նշանաւոր աղանդի վերտրեքութեամբ։ «Բանալի ճշմարտութեանը» և Միւսղի 1837 թուի № 38 գործը ամենամանկագին տեղեկութիւններն են պարունակում այս աղանդին վերաբերեալ, որից և մասամբ օգտուեց պ. Երիցեանը Փորձում (1)։ Մեզ պակասում էր Անանիա Նարեկացու գլուխ — գործոց համարուած ընդդէմ Թոնդրակեցիների գրած թուղթը, յիշուած գրեթէ հետագայ բոլոր գրողներից։ Ահա այդ թուղթն է, որ այժմն առաջին անգամ հրատարակում ենք։ Երգարացիում է արգեօք այդ գրուածքը այն բոլորը ինչ յուսացուած էր գրանից։—Պէտք է խոստովանել որ ո՛չ, Գրեթէնք որ Անանիա Վաթուղիկոսի հրամանով Անանիա Նարեկացին գրել է Թոնդրակեցիների աղանդի մասին, սպասում էինք շատ տեղեկութիւններ, բայց դրանցից և ոչ մէկը չենք գտնում։ Բանից դուրս է գալիս, որ այդ թուղթը աւելի անձնապաշտպանութեան թուղթ է, Գրա մէջ Անանիան անհիտում է Թոնդրակեցիներին, որպէս զի ինքը Թոնդրակեցի չհամարուի։ հարկ է դատում զնել իւր հաւատամքը, որպէս զի երևի իւր ուղղափառութիւնը։ Տարօրինակ և սրտաշարժ տեսարան։ Հայոց ամենամեծ վարդապետներից մէկը, Նարեկեան գպրոցի հիմնադիրը, յօր ծերութեան, հիւանդութեան անկողնում մեղադրում է աղանդաւորութեան մէջ նոյն իսկ իւր ընկերակից կրօնաորից, որի կեղտոտ անունը ընջուել է պատմութեան էջերից և մեզ չէ հասել։ Անանիա Վաթուղիկոսի ժամանակները կրօնական յուզմունքը գագաթնակետին էր հասել, ամբողջ դաւաճներ և նահանգներ, ինչպէս Միւնիքը, իրենց կախկոպոսներով անցնում էին հալածուած, խոշտանդուած աղանդաւորների կողմը։ Թագաւորում էր հալածանքն ու ժողտանդութիւնը։ Քսուների և մատնիչների համար լուսապարէզ էր բացուած։ Լմբաստանում էին երբեմն ամենամարուր և անմեղ անձնաւորութիւններ, որոնց միակ յանցանքը մոլեռանդութեան պախտութիւնն էր, և հալածանքներին չը համակրելը։

Աւ ահա թէ ինչ գտնն և արգարացի ցասմամբ լի խօսքերով է գառ-

(1) Տե՛ս Փորձ, 1880 թ. № X Կր. 91—130. Տե՛ս նաև 2-րդ և 3-րդ հատմ. Հայոց Բ. հատոր, Կր. 884—895.

նում Անանիա Նարեկացին իւր անուանակից՝ ընկերակից՝ Հայրենակից Անանիա Կաթուղիկոսին՝ որն իրենից ուղղափառ խոստովանութեան գիր էր պահանջում և անէծք Թոնգրակեցիներին։ Եւ իսկապէս այս առաջին անգամ լոյս տեսնող թղթի ամենանշանաւոր մասը այդ սրաշարժ, զգացուած յառաջարանն է և մասամբ էլ նոյն ոգւով գրուած վերջարանը։ Այդ մի քանի տողերը ամբողջ դարի պատկերն են բաց անում մեր առաջ։

Մի քանի խօսք էլ այս գրուածքի հանգամանքների վերաբերութեամբ՝ Մինչև որս այս գրուածքը համարուում էր կորած, թէև գրուածքի վերնագիրը յայտնի էր և սխալմամբ վերագրուում էր Անանիա Շիրակացուն, որովհետև այս գրութեան հետ կից յիշուում էր և « Բացայայտութիւն թուոց, մի ուրիշ գրութիւն »)։ Այդ գրութիւնը « Անանիայի Հայոց վարդապետի սակս բացայայտութեան թուոց » վերնագրով կայ և մեր ձեռագրում և առանց որ և է կասկածի վերաբերում է Անանիա Նարեկացու գրչին։ Այստեղ տեղը չէ ապացոյցներ բերել մեր այս կարծիքին՝ սակայն այսչափն ասենք, որ այդ գրուածքը թուերի խորհրդաւոր նշանակութեանց բացատրութեանն է նուիրուած և Անանիայի աշակերտը Գրիգոր Նարեկացին շատ յաճախ գրուածքների մէջ խօսում է իւր վարդապետի հետևութեամբ թուերի խորհրդաւորութեան մասին։ Այս անտիպ գրութեամբի սկզբնաւորութիւնն է. « Կամ եղև ինձ սակաւ ինչ աշխատասիրել սակս թուոց բացայայտութեան ի բազմաց անտես եղեալ . . . » իսկ վերջաւորութիւնն է՝ « և որպէս անցեալ ամն հնացեալ վախճան առնու, և վերջին որն անցեալ ամին կատարումն և նորոյ ամին սկիզբն՝ ի միջոցի կալով ունի մասն ինչ ի հնոյն և հաղորդութիւն ունի ընդ նորոյն ամին՝ սկիզբն գուով. » Այս գրուածքը կրկին անգամ ընդարձակ է Անանիայի « խոստովանութեան գրից »։

Մեր ձեռքում եղած ձեռագիրը թէև առանց համարի, կամ համարք եղծուած, անկասկած տպագրեալ Մայր ցուցակի № 499-է, Զգօն գրութերից 3-ը։

Ձեռագիրը կաշեկազմ է, 25×19 հարիւրամետր, կոկած բամբակեայ թուղթ, բոլորագիր, մեծ մասամբ երկիջեան, տեղ տեղ միապաղաղ տողերով, բովանդակութիւնը տես Մայր-ցուցակ, թերթ 527=1054

1) « Գրչագրաց ցուցակաց մէջ ուրիշ երկասիրութիւն մ'ալ կտեսնենք՝ Անանիայի անուամբը. » Անանիայի գիր խոստովանութեան յաղագս սուտ կարծեաց ի վերայ նորա, և բացայայտութիւն թուոց. » Այս վերջին խօսքը հաւանական կերևցրէ մեզ Շիրակոււոյն ընծայել զայն, և ոչ ուրիշ նոյն անունը կրող վարդապետի մը. » Հայկ. Հին Գպրութիւն, Զարբան, 1886 եր. 446.

երես, գրութիւնը դիւրընթեռնելի և պարզ, լաւ պահուած, տողերի թիւը—30, էջերի մեծութիւնը 19X6 Տ. մ. գրիչ՝ Ղազար քարտուղար, տեղի՝ Ազուլեայ Թովմայ Առաքելոյ վանք, թուական՝ ՌՃԻ. ըստ խնդրանաց Գրիգոր արեղայի. (յիշատակարանը նօտր գիր և նոր գրութիւն):

Ձեռագիրը նոյնութեամբ տպուած ենք, և և -- խառն ուղղագրութիւնը միօրինակութեան համար ամեն տեղ վերածելով հնագոյն ձևին: Ակններև աղջատուած բառերը ուղղուած ենք բնագրուամ սակայն գծի տակ զննելով ճշգրութեամբ ձեռագրի ընթերցուածը:

ՄԻԱԲԱՆ.



ԵՐԱՆԵԼՈՅ ՀԱՒՐ ԱՆԱՆԻԱՅԻ

Գ Ի Ր Խ Ո Ս Տ Ո Վ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

ՅԱՂԱԳՍ ՍՈՒՏ ԿԱՐԾԵԱՅՆ ՈՐ ՎԱՍՆ ՆՈՐԱ:

ՈՐՊԷՍ զի ծանիցի իմոց բանից ճշմարտութիւն որոց կամիցին ներհուն լինել լաւագոյն մտածութեամբ բովանդակ իմանալ զհաւատիս հաւատոց իմոց՝ ահաւասիկ ածեմ բոլորից լսելեաց ի յայտ 1) ձեռնարկութեամբ իմով և գրով մատանց իմոց, մանաւանդ քեզ, իրանդ անիրաւութեամբ և ծանախթ ոչ ծանախթս: Մենդակիցդ աւտարացեալ, և ի ծննդենէ տէր գոլով մինչև ի ծերութիւն՝ ծառայի անտեղեակ բարուց և հաւատոց: Նախահարբք և գաւառաւ, և աղղաւ և ախորժակովք, և վարժիւք և կենակցութեամբ ի բնէ ի միասին կրանիւք միակամ վարելով առ Աստուած և առ մարդիկ, կատարեալ և անխէթ հաւատով և անխրթնի խորհրդականութեամբ, ի ժամ վախճանի իմոյ ուրախ լինել ի սէր հոգևոր սիրովն Աստուծոյ: Նեղութիւն և անձկութիւն, հալածումն և աւտարութիւն, բարկութիւն ոչ իրաւացի, և սրտմտութիւն ոչ բանականաբար բաժին ինձ և վիճակ ի քէն սահմանեալ: Ոչ բարեք ընտրեալ կայծակմամբ հրոյ այրել զյարդն, այլ խաւարելոյն և խարդաւանողին, բազմագլուխ վիշապին գոլով խորհրդակից, և ընդունակ խնդութեամբ բանասրկու բանից (կեղտաբնակ 2), մոլեգնի, տիրասպան քահանային, և եղբայրասպան կայենի, և մարդազէմ գազանին եղեր լսող, ախոր-

1) Ձեռագրում՝ ի յայտ:

2) 2. այս բառի առաջին տառը անվերծանելի է: Թերևս՝ պէղտաբընակ:

ժելով զինն տարագրութիւն: Հեշտալի քեզ եղեալ՝ արտարէն մտածութեամբ՝ զինէն սակս հաւատոյ բազմագիւմի ջանիւք խոշորագրութիւնքն մարգարտոշոշ, չարաշշունջ, գրեմխող 1), պիղծ բերանոյն: Եւ սրգ, ես ոչ եթէ լաւ ինչ եմ քան զայնոսիկ, որ յառաջագոյն ընկալան զայսպիսի բանս չարեաց ի չարայն խորհրդոց, ըստ ժամանակին պատճառի ի վերայ ինքեանց հեղեալ, և համբերեցին գոհութեամբ և յանձն առին զարհամարհանս և զամենայն վիշտս, առ ոչինչ համարեալ որ ինչ ի վերայ երկրի փառք և մեծութիւն. այլ երկնաւորին ակն ունելով փառաց, աներևոյթ յուսով զկենաց անվախճանից՝ ցանկային հասանել: Եւ զի նախ յայտնապէս զաւտարտեացն չար կարծիս հերքեալ մերժեցից յինէն, որք ոչ ըստ աստուածային գրութեանցն հետեւեցին հաւատոց, այլ ըստ իւրեանց մտացն խորհրդոց, և անաստուած վարդապետութեան հետեւեալ 2) ունայնափաստակ ջանիւ՝ արտարս անկեալ եղեն և յուղիղ դաւանութենէ ճշմարիտ աստուածաբանութեան, վասնորոյ և ի սուրբ առաքելոցն, և ի նոցին հետևողացն, և յերանելի հայրապետացն և սուրբ վարդապետացն՝ նրդովիւր մերժեցան յեկեղեցւոյ Քրիստոսի, յիւրաքանչիւր ժամկնակս ուղղափառացն՝ չարարուեստ հերձուածողքն: Աստի և ես, անարժանս և տրուպս, նուաստ ծառայս Աստուծոյ, նզովեմ զամենայն հերձուածողսն, զառաջինս, և զմիջինս, և զվերջինս, զհամաձայնս միմեանց չարաչար վարդապետութեամբ, որք ի սկզբանէ մինչև ցայսաւր եղեն հակառակ աստուծոյ, և վարդապետութեան սրբոց առաքելոցն, և քարոզութեան աւետարանչացն, և ամենայն սրբոց Աստուծոյ, ողջամիտ և ուղղափառ վարդապետութեան: Եւ սրգ, յԱստուծոյ ամենակալէ, ի հաւրէ և յորդոյ և ի սուրբ հոգւոյն, յարարէն երկնից և երկրի, երևելեաց և աներևութից, և (յ) ամենայն զոյութեանց հրեշտակաց և մարգկան նզովեալ եղիցին ամենայն հերձուածողքն, որք առ նախահարցն ժամանակաւն եղեն, և որք առ մարգարէիւքն, յառաջ քան (զ) ծնունդն Քրիստոս-

1) Ինձ անձանգթ բառ.

2) 2. հ ե տ ե ե լ :

սի ի սուրբ կուսէնս և որք յաւուրս առաքելոցն և որք ի ժամանակս սուրբ Հայրապետացն և որք մինչև ի մեզ երևեցան չարութաւք և որք ի մերում ժամանակիս որք թոնդրակեցիք կոչին նզովեալ եղիցին յԱստուծոյ և (յ)ամենայն սրբոց Աստուծոյ: (Յ)Ազամայ նախատեղծէն Աստուծոյ մինչև ցԱբրահամ ի յերանելի նախահարցն նզովեալ եղիցին: ԶԱբրահամայ մինչև ի Մովսէս նախամարգարէն ի սուրբ Հայրապետացն նզովեալ եղիցին թոնդրակեցիքն: Ի Մովսէսէ մինչև ի Յովհաննէս Մկրտիչ ի բոլոր 4) մարգարէիցն և դատաւորացն և թագաւորացն և քահանայապետացն և բնաւ արդարոցն նզովեալ եղիցին թոնդրակեցիքն: Ի Քրիստոսէ բնորեալ (յ)աշակերտացն, յերկուտասանիցն և յեւթամասուն և երկուցն և յամենայն առաքելական դասուցն նզովեալ եղիցին թոնդրակեցիքն: Յառաքելոցն Հեռեւորացն, ի ճմարիս քարոզացն և յուղիղ դաւանողացն սուրբ երրորդութեանն նզովեալ եղիցին թոնդրակեցիքն: Ի Յակոբայ տեառնեղբորէն, յառաջին եպիսկոպոսէն Երուսաղէմի մինչև ի ժողովն Քաղկեդովնի յամենասուրբ եպիսկոպոսացն Երուսաղէմի նզովեալ եղիցին թոնդրակեցիքն: Ի Յեւոզայ առաջին եպիսկոպոսէն Անաիբայ և յագնատիոսէ երկրորդ եպիսկոպոսէ յետ առաքելոցն մինչև ի ժողովն Քաղկեդոնի նզովեալ եղիցին թոնդրակեցիքն: Ի Մարկոսէ աւետարանչէն և յԱնանիոսէ առաջին եպիսկոպոսէ Աղէքսանդրի յամենասուրբ եպիսկոպոսացն նզովեալ եղիցին թոնդրակեցիքն: Ի Տիմաթէոսէ առաջին եպիսկոպոսէն Լիբեսոսի մինչև ի ժողովն Քաղկեդովնի յամենասուրբ եպիսկոպոսացն Լիբեսոսի նզովեալ եղիցին թոնդրակեցիքն: Ի Ստաբէոսէ առաջին եպիսկոպոսէն Բիզանդոնոյ 2) մինչև ի շինելն Կոստանդէանոսի զԿոստանդինուպաւլիս յամենասուրբ եպիսկոպոսացն նզովեալ եղիցին թոնդրակեցիքն: Ի Միտրոփանոսէ առաջին պատրիարգէն Կոստանդինուպաւլիս մինչև ի ժողովն Քաղկեդովնի յամենասուրբ եպիսկոպոսացն նզովեալ եղիցին թոնդրակեցիքն: Ի Հայոց Լուսաւորչէն, ի սրբոյն Կրի-

1) 2. Մկրտչի բոլոր:

2) 2. Բիւզանդոնոյ:

գորէ առաջին քահանայապետէն Հայոց մինչև ի մեզ յամենա-
սուրբ կաթողիկոսացն Հայոց նզովեալ եղիցին թոնդրակեցիքն:
Յեղիշայէ՝ առաջին եպիսկոպոսապետէն Աղուանից՝ մինչև ի մեզ
յամենասուրբ եպիսկոպոսացն նզովեալ եղիցին թոնդրակեցիքն:
Ի սուրբ և ի մեծ ժողովոյն Նիկիա(1), ՅժԸ, եպիսկոպոսացն
նզովեալ եղիցին ընդ Արիոսի թոնդրակեցիքն, ամէն: Ի Կոստան-
դինուպուլսի սուրբ ժողովոյն, ի ճՄ, եպիսկոպոսացն ընդ Մակե-
դովնի հոգէմարտին նզովեալ եղիցին թոնդրակեցիքն: ՅԵփեսոսի
սուրբ ժողով (ոյն), ԲՃ, եպիսկոպոսացն, ընդ Նեստորի չարափառի
նզովեալ եղիցին թոնդրակեցիքն: Յամենայն ուղղափառ եպիսկո-
պոսաց, որ յամենայն ազգս եղեալ ընդ ամենայն տիեզերս, նզո-
վեալ եղիցին թոնդրակեցիքն: Ար իսկզբանէ աշխարհի մինչև ի գա-
լուստն Քրիստոսի սուրբք են լեալ, և որ լինելոց են, յամենայն
ազգս, յամենեցունց նզովեալ եղիցին թոնդրակեցիքն:

Եւ որ սուտ նզովէ զնոսա և կամ կեղծաւորութեամբ և կամ
քողատուղեալ խորամանկութեամբ, կամ լոկ լեզուով բերանոյ և
չրթամբք ձայնիւ և ոչ սրտիւ, և նա՛ նզովեալ լիցի յամենեցուն
վերոյգրեալ 1) սրբոցդ: Եւ զի համառուտ ասացից, և ոչ բազմու-
թեամբ անուանց Հերձուածողացն դժուարալուր զբանս արարից
լսողաց, որպէս վերագոյն ասացի և զարձեալ ասեմ, որ իսկզբա-
նէ մինչև ի մերս ժամանակ երևեալ են Հերիաիկոսք՝ հակառակ
ճշմարիտ հաւատոց որ յաստուած, և տրւութեան օրինաց, և
հոգէլից մարգարէիցն նախագիտութեան, և Քրիստոսի տնօրէ-
նութեան, անճառելի ծննդեանն ի սուրբ կուսէն Մարիամայ, և
ամենայն կրիչն ըստ մարդկութեան, թլիսատութեան և մկրտու-
թեան, և սքանչելագործութեան, և վարդապետութեան չարչա-
րանացն, և խաչելութեան, մահուանն և թաղման, և երեքօրեա (1)
յարութեանն, և համբարձմանն յերկինս, և միւսանգամ գալլս-
տեանն, և յարութեան բոլոր սեռի մարդկութեանս, և արդար
դատաստանին արդարոց և մեղաւորաց, և կենացն անվախճանիցն
արդարոցն, և տանջանաց մեղաւորացն ո՛չ հաւատացին և այլա-

1) 2. Վր գրեալ

ձև խորհեցան Գրիստոսի և նորին լուսաւոր վարդապետութեանն, և առաքելական սահմանադրութեան, և սուրբ երանելի վարդապետացն և հայրապետացն, և եպիսկոպոսացն Երուսաղէմի, Հռովմայ, և Աղէքսանդրի, և Անտիօքայ, և Եփեսոսի և Կոստանդինուպուլսի, և որ յամենայն քաղաքս և յամենայն գաւառս ընդ ամենայն տիեզերս եպիսկոպոսք սուրբք և վարդապետք ուղղափառք, այնպիսիքն որ սոցա գաւառութեան արտաքոյ խորհեցան բանիւ և գործով, բերանով և սրտիւ, նզովեալ եղիցին. նախ (ի) ճշմարիտ քահանայապետէն միածնի որդւոյն Աստուծոյ և ապա (յ) իւրոց օծելոցն զորոց քաղաքս վերոյգրեցաք ¹): Եւ որ որ հազորդի չարափառացն անաստուած վարդապետութեան, առ ճշմարիտս ունելով զնոսա և զնոցին խոտորնակ բանս, ընդ նոսին նզովեալ եղիցի յառաքելոցն և յամենայն սրբոցն:

Եւ որ յազգէ հայոց, հայկական բարբառով, որք և իցէ՝ հայրապետ կամ եպիսկոպոս, կամ քահանայ, կամ սարկաւազ, կամ կրաւնաւոր, կամ զինչ և իցէ մարդ ի վիճակէ սրբոյն Գրիգորի, և արտաքոյ նորա վարդապետութեանն խորհիցի կամ ուսուցէ՝ ի սուրբ Ղուսաւորչէն և (յ) իւր զաւակացն՝ սրբոյն Ընքոտակիսէ, Վրթմանիսէ, Յուսկանն, Գրիգորիսէ, Ներսէսէ և սրբոյն Սահակայ յաւրհանութենէն հեռի՝ եղիցի, և որոշեալ արտաքսեցին ի փառացն արդարոց:

Եւ արդ, որովհետև զամբարշտացն և զթշնամեացն աստուծոյ, որ իսկզբանէ ի վերուստ մինչև ի կատարած հակառակք ճշմարտութեան երևեցան ստութեամբ՝ քարկոծեցաք զնոսա բանիւն ճշմարտութեան Աստուծոյ, և զեկեղեցւոյ հիմանց հաստատուն և անշարժելի վէմն հաւատոյ բերաք ի ճակատ խոտտովանութեամբ ամբիժ հաւատոց, որ ի Հայր և յՈրդի և ի սուրբ Հոգին. զոչ ախորժողս ճշմարիտ գաւառութեան առաքելոցն և նոցին հետևողացն սրբազան հարց, և եպիսկոպոսացն, և վարդապետացն՝ նզովեցաք յամենայն զաւրութենէ սրտի յաւժարութեամբ, և ոչ կցորդ ուրուք եղաք բանի, և կամ հազորդ պղծազաւան հերետիկոսացն, այլ

մեկնեալ ի նոցանէն մերձ գտաք սուրբ և ուղղափառ Հաւատարիմ արանց աստուածայնոց, ընկալեալ զնոսա յաւրինակ և (յ) առաջնորդ, և պարհնպ ամուր, և յարկ հաստահեղոյս, և ջաջ հաւատոց, որով լուսաւորեալ՝ ղխաւարիւոյն զհետ ոչ երթիցուք ճանապարհ: Այլ յամենայն խթոտ և գերբուկ խորխորատից և սղմակի ջրհորոց գերիվերոյ զիւրին և հարթ աահու, արքունական սղոտոսայիւ, ընթացեալ հասցուք ի յարկս վիմատաշ բարձրաձեզուն տանարի շրջապատեալ աշտարակաւք, բացեալ զգրունս ոսկիապատս մոցուք ի ներքս՝ խոտտովանութեամբ և աւրհնութեամբ երկիրպագցուք առաջի տեաուն արարչին մերոյ. զի նա ինքն է տէր Աստուած մեր, մեր ժողովուրդք և խաշն արաւտի նորա:

Եւ արժանացեալ այսմ մտից արդարոց, ընդ նոսին վերաձայնեալ ասասցուք.

Հաւատամք ի մի աստուած, ի Հայր ամենակալ, յարարաւղն երկնի և երկրի. և ի մի տէր Յիսուս Քրիստոս, որդին աստուծոյ՝ ծնեալ և ոչ արարեալ, որով ամենայն եղև՝ երկինք և երկիր, երեւելիք և աներևոյթք. և ի սուրբ Հոգին յանեղ և ի կատարեալ և տէր կենդանարար, որ խաւսեցաւ յաւրէնս և ի մարգարէսն, զուգակից հաւր և որդւոյ, արարիչ ամենայն արարածոց, որ երեւին և որ ոչն երեւին. յերրորդութիւն կատարեալ, երեք անձնաւորութեամբ, և մի աստուածութիւն՝ ի Հայր և յորդի և ի սուրբ Հոգին: Հայր անսկիզբն և անծին, որդի անբսկզբնակից և ծնունդ հաւր անճառելի, Հոգին սուրբ զուգակից որդւոյ, բղխումն ի հաւրէ անպատմելի: Հայր՝ աստուած ճշմարիտ, որդի՝ աստուած ճշմարիտ, Հոգին սուրբ՝ աստուած ճշմարիտ, երեք կատարեալ անձինք, մի կատարեալ աստուածութիւն, մի և երիս, երեք և մի: Մի տէրութիւն, մի իշխանութիւն, մի ¹⁾ թագաւորութիւն, մի ²⁾ արարչութիւն, մի զաւրութիւն, մի բնութիւն, մի կամբ, մի փառք հաւր և որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Անբովանդակելի, անճառելի, անպատմելի, անհասանելի, անտանելի, ան-

մանալի, անտեսանելի, անպարագրելի, ի վերոյ ամենայնի, ի ներքոյ ամենայնի, արտաքոյ ամենայնի, ընդ ամենայն տեղիս՝ ի բարձրութիւնս, ի խորութիւնս, յերկայնութիւնս, ի լայնութիւնս, Զամենայն բաւանդակեալ ունի և ինքն յուսմքէ ոչ բովանդակի, և ի են երկինք և երկիր փառաւք նորա: Մի է աստուած Հայր և որդի և Հոգին սուրբ, յորմէ ամենայն և որով ամենայն և յորում ամենայն, արարիչ ամենայնի, երկնից և երկրի, Հրեշտակաց և Հրեշտակապետաց, զաւրութեանց, աթոռոց, տէրութեանց, պետութեանց, իշխանութեանց, սերովբէից և քերովբէից, Ազամայ նախատեղծին և ամենայն մարդկութեանս և ամենայն արարածոց յօյրնչէ գոյացուցիչ: Ար ասաց և եղեն, Հրամայեաց և Հաստատեցան, կարգեաց յաւիտեանս յաւիտենից ¹⁾, սահման եգ ամենայնի և ոչ անցանեն: Աստուած նախահարցն և զարուն արգարոց առաջնորդ ²⁾, աստուած Արահամու և Սահակայ և Յակովբայ և բոլոր դասու Հայրապետացն: Աստուած Մովսէսի և Ահարոնի երևեալ, և առաքեալ յեգիպտոս, և փրկեալ զԺողովորդն (յ) եգիպտացւոցն սքանչելագործ զաւրութեամբ և Հարուածովր: Նոյն և ս տուող ³⁾ աւրինացն ի ձեռն Մովսէսի, նոյն ինքն և զաւրացուցիչ Յեսուայ, և ընտրող զատաւորացն, և առաքող մարգարէիցն, և կատարող քահանայիցն, և աւժող թագաւորացն, և բարեաց պարգևիչ Ժողովրդեանն, և խրատիչ չարագործացն յւրաբանչիւր Ժամանակս: Սա ինքն աստուած մեր՝ Հայր ամենակալ, ի վախճան Ժամանակի առաքեաց զորդին իւր միածին աւետարանութեամբ Հրեշտակապետին Փարիէլի առ կոյսն Մարիամ: Ար իննամենայ (յ)ղութեամբ ընակեցաւ յարգանդի և առեալ մարմին ճշմարտապէս՝ ծնաւ մարդ կատարեալ, անձառելի միաւորութեամբ, միածին ի Հաւրէ ⁴⁾, նոյն միածին և

1) 2. յաւանս յաւնց,

2) Թերևս պէտք է ընթեռնուլ՝ առաջնոց,

3) 2. տվող,

4) 2. միածնի հաւրէ,

ի մաւրէ, որդի աստուծոյ, նոյն և որդի մարգարէ Զաւրէնան կատարեալ, որպէս տուող աւրինացն, ութաւրեա(յ) թլխատութեամբն և քառասնաւրեայ ընծայելով ի տանարին՝ ի գիրկս ծերունւոյն Աիմէոնի գգուեալ տղայաբար և ի յերկինս Հաւր ամթռակից Զարգացեալ անմամբ մարմնոյ մարդկապէս, լրութեամբ աստուածութեանն՝ հաւատար Հաւր գոյով, առանց պակասութեան: Զամենայն կիրս մարդկային կենցաղոյս կրեաց բաց ի մեղաց: Միաւորեալ ընդ մարմնոյն աստուածութեամբն՝ միով բնութեամբ մկրտեալ երեսնամեա(յ) ի Յորդանան ի Յովհաննէ: Հայր ի վերուստ վկայեալ՝ դա է որդի իմ սիրելի, և հոգին սուրբ աղանակերպ իջեալ ի վերայ նորա, զմիակամութիւն ցուցանելով մարմնացելոյ որդւոյն Հաւր զվկայութեան: Եւ աստանաւր յայտնեցաւ երրորդութիւն աշխարհի, երկց կատարեալ անձանց միութիւն, և տուաւ սահման մկրտութեան հաւատացելոց յանուն Հաւր և որդւոյ և հոգւոյ սրբոյ, զերրորդութիւն դաւանելով և զմիութիւն խոստովանելով: Յետ այսորիկ պահեաց քառասնաւրեայ և քաղցեալ մարմնոյ կրիւք, յաղթեաց փորձողին աստուածութեան զաւրութեամբ, մի և նոյն գոյով աստուած և մարդ: Սրանչեւագործեաց միով ներգործութեամբ, զոր աւետարանիչքն պատմեցին, զամենայն ախտս և զհիւանդութիւնս բժշկելով. զամանս բանիւ, զոմանս հպաւորութեամբ ձեռին, որպէս՝ Քեզ ասեմ, արի և գնա, և Կալեալ զձեռանէն յարոյց, և թողեալ լիցին քեզ մեղք քո, և Ձեռն եզ և բժշկեաց: Վարի և թքով, զի յայտնի արատցէ զմիաւորութիւն աստուածութեան և մարմնոյն, և ցուցցէ զմարմինն իւր կարող գոյ կեցուցանել զաւրութեամբ աստուածութեան միացելով: Արպէս արկեալ զմատունան յականջսն և եթուք անդր, և կաղեալ զլեզուէն ձեռամբ հրամայէր՝ Բացի՛ր, և մերձեցեալ ի դագաղան յարոյց զորդի այլւոյն: Զայնիւ մեծաւ տղաղակեալ յարոյց զՎազար չորեքաւրեայ մեռեալ, և համբարձեալ զձեռս իւր աւրհնեաց զառաքեալսն և վիշեաց ի նոսա և ասէ՛ Առէք հոգի սուրբ, և բանիւ ետ իշխանութիւն թողուլ զմեզս և ունել: Տէր կենաց և մահու գոյով աստուածութեամբն, նոյն և մարմնովն անշփոթ միաւորութեամբն. մի որդի, մի բնութիւն, մի դէմք, մի

կամք, մի ներգործութիւն, անձառ միաւորութեամբ, աստուածութեամբ և մարդկութեամբ: Այսինքն՝ կամաւք իւրովք յանձն առ զարհամարհանս, զանարգանս, զբամբասանս ի հրէից անտի. մատնեցաւ յաշակերտէն, ըմբռնեցաւ որպէս մարդ, կապեցաւ որպէս չարագործ, եկաց առաջի Պիղատոսի: Դատաւարտեցաւ որպէս մահապարտ, այսպնեցաւ ի Հերովդէէ, փշովք պսակեցաւ ի զինուորաց, երկրպագեցաւ ի խաղարարողացն, որպէս անարժան գանեցաւ հարուածովք, բեւեռեցաւ ի փայտի, խաչեցաւ ընդ աւազակս, մեռաւ որպէս մարդ, թաղեցաւ ի գերեզմանի մարմնով: Չայս ամենայն կրեաց կամաւ հաւր և հաճութեամբ սուրբ հոգւոյն, անբաժանելի աստուածային բնութեամբն միացելով ընդ մարմնոյն:

Անարգեալ որպէս մարդ, նոյն ինքն փառաւորեալ ի հրեշտակաց՝ որպէս աստուած: Արհամարհեալ որպէս մարդ, նոյն ինքն հաւր ամթռակից՝ որպէս աստուած: Բամբասեալ որպէս որդի մարդոյ, նոյն ինքն հաւր փառակից՝ որպէս որդի Աստուծոյ: Կապեալ որպէս մարդ մարմնով և ընդ հաւր բացարձակ բովանդակեալ ունի զամենայն որպէս աստուած: Խաչեցաւ, բեւեռեցաւ, մեռաւ որպէս մարդ, նոյն ինքն անմահ ի մեռելութեան մնաց որպէս աստուած: Այլ որք և այլ, այլ մի և նոյն աստուած և մարդ՝ անձառելի միաւորութեամբն կրեաց զայս ամենայն և կատարեաց ¹⁾ փան փրկութեան մարդկան և սիրոյ: Յարեաւ աստուածապէս ի մեռելոց մարմնովն, որով զմահ ճաշակեաց, և երևեցաւ աշակերտացն: Չմարմին իւր եթող յաշխարհի և զարիւն իւր ետ մեզ գրաւական, խորհրդական հացիւն և բաժակաւն միշտ պատարագեալ մեզ ի կեանս և ի փրկութիւն, և ի թողութիւն մեղաց, և թոշակ կենացն անվախձանից: Չմեզ ընդ ինքեան միացուցեալ մարմնովն, որ ի մէնջն էաւ, յարուցեալ ի մեռելոց նովին մարմնովն հաւատարիմ՝ եղև յաշխարհի, և վերացաւ փառաւք: Համբարձաւ արհնութեամբ և նստաւ ընդ աջմէ հաւր ի բարձունս նովին մարմնով, վկայեալ ի հրեշտակաց և (յ)առաքելոցն որդի աստուծոյ, Յիսուս

1) 2. կատարեալ:

Քրիստոս տէր և աստուած, փառաւորեալ ընդ հաւր և սուրբ հոգւոյն— յաւիտեանս յաւիտենից ամէն:

Գայ միւսանգամ ի յերկնից, ի վախճանի աշխարհի ըստ իւրում ճշմարիտ և անսուտ խոստմանն և վկայութեան հրեշտակացն, որք ասացին առաքելոցն. Այս Յիսուս որ վերացաւ յերկինս, այնպէս եկիցէ յերկնից, և առաքելոցն ճշմարիտ վարդապետութեան, և աւետարանչացն և ամենայն սրբոց, որք ակն արկին գալստեան նորա: Եւ առնէ յարութիւն ամենայն մարդկութեանս, յԱդամայ մինչև յիւր գալուստն, արդարոց և մեղաւորաց, և արդար դատաստանաւ հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործս իւր՝ յաւիտենական դարգարոցն բարութիւնսն սահմանեալ, և անվախճան զմեղաւորացն տանջանսն:

Եւ այսմ հաւատոց եմ որդի և ժառանգ, ի ծննդենէ մինչև ի ծերութիւն, և ի մահուանէ մինչև ի յարութիւն, յորում աւուր և դատաստանն և հատուցումն արդար կշռովքն աստուծոյ բոլոր մարդկութեանս: Եւ ես հաւատացեալ այսմ ամենայնի՝ խոստովանութեամբ սրբոյ երրորդութեանն և մի աստուածութեան, հաւր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, արարչին երկնից և երկրի, և որ ինչ յերկինս են, որ ինչ ի վերայ երկրի, երևելիք և աներևոյթք, և անսկիզբրն էութեան նոցա: Այսինքն՝ մի աստուած հայր միածնի որդւոյ և պատճառ երդութեան հոգւոյ սրբոյ, երրորդութիւն կատարեալ և մի աստուածութիւն, որպէս և ուսաք ի սուրբ գրոց, յաւետարանչացն, յառաքելոցն և ի սուրբ երանելի վարդապետացն: Եւ յայսմ հիման հաւատոց հաստատեալ երկիր պագանեմ աստուծոյ, և գոհանամ և փառաւորեմ և համբերեմ ամենայն վտանգից, որ ըստ մարմնոյ ընութեանց, որ ի ներքուստ և յարտաքուստ, որ յեղբարց և ի սուտ եղբարց, որ յազգէ և որ յաւտարաց: Եթէ վասն իմ յանցանաց, գոհութիւն աստուծոյ, և եթէ յաստուծոյ փորձութիւն, առաւել գոհութիւն նմա: Եւ եթէ անիրաւ պատահումն և այսմ գոհութիւն աստուծոյ, որպէս Նաբաւթ մեռանի և Յովհաննէս գլխատի և Յոհան եքսաւաւսիս լինի, և այժմ ոչինչ զարմանք: Եւ եթէ մտակորոյս և անտեսից լուսոյ և նսեմացելոց անձանց գիւտ, և անհանձարից խորհրդոց յաժումն, և ատեցո-

դացն 4) նախանձ, և որովայնապաշտ փրացելոյ ժայթքումն, և հեշտութեան 2) պորտոյ ծառայի, և վրիպակ խաղացելոյ ըստ կամս քաղացի աղիճաց 3), ոչ ախորժելով զազատաբարոյից տեսանել կանգուն զկենաց բարեյորդոր վայելչութիւն, զինքեանց վիճակի բաժին վերաձայնեն 4) այնց, յորոց ակն ածեն սակս իրեանց անմահ և ատելի աստուծոյ վարուցն համակելոց:

Արպէս և յօրովակի գտանել աւրինակս ի նախնի ժամանակոց՝ զարգարոցն բազում ինչ ատել անիմաստոցացն 5) զանուղայ բանս և գործս՝ ի յամբարիշտ բերանոց բղիտեալ աղբերաբար զդառն ջուրց հոսանս, որով զբազմաց լսելիս առնեն առուս քարալից կուռակոյտ, կուռակ զկուռակիւ արկեալ, բազում բուսոց և տնկոց և խոտոց բարեւայելուչ ջուրացելոց առնեն կորուստ, յիմակոյտ և աւազակուս ծածկութիւ: Այսպէս և բանտարկուք (և) 6) անփակ բերանովք առնեն վտարանգի զանձինս անմեղաց, յարձակմամբ յանգուլն և առանց բանի աստուծոյ բացմամբ բերանոց՝ հոգէհալած և մահակորդ բարբառաք իւրեանց հեղեղին: Իսկ անմեղացն պատշաճ իւրեանց վարկեալ համբերեցին գոհութեամբ ասելով. Նղիցի անուն տեսան աւրհնեալ, և փառք աստուծոյ յաղագս ամենայնի: Եւ պարտիմբ գոհանալ զաստուծոյ յամենայնի, և ես յայսմ ասացից գոհութիւն աստուծոյ, զի բարի է յուսալ ի տէր յամենայն կեանս ի բարեկեցութեան և ի թշուառութեան, ի փարթամութեան և յաղքատութեան, ի բարձրութեան և ի նուաստութեան, յանդորրութեան և ի նեղութեան, ի փառաբորութեան և յանարգութեան, ի խնդութեան և ի տրամութեան, ի հաշտութեան և ի

1) 2. ատելողացն:
 2) Թերևս պէտք է կարգալ՝ հեշտութիւն, կամ ենթադրել մի բառ պակաս:
 3) Այս վերջին երկու բառը մենք գրինք անջատ հասկանալով այսպէս. աղիճ = պոռնիկ, քաղացի = քաղաքապետարան:
 4) 2. վերաձայնէն:
 5) Այսպէս ձեռագրում: երևի՛ անիմաստոցն:
 6) Այս և-ն աւելորդ ենք համարում:

խոտութեան, ի խաղաղութեան և ի հալածանս, ի սիրելութեան և յատելութեան, ի յղիութեան և ի տառապանս, ի բարեբանութեան և ի բամբասանս, ի գոյութեան և ի պարսաւանս, ի պատիւ և յանպատուութեան, ի մեծութեան և ի նուաաստութեան, ի վեհագոյն վայելուչս յարկս բնակութեան և յարտաբնել յանիրաւաց, ի հայրենի ժառանգութեան յամենայնիւ 1) գեղեցկապէս յարմարեալ և ի տարագրութեան յամենայնէ զրկեալ և նուազեալ, առանց յարկի և ծածկութի 2), ի բոլոր պիտոյից սահմանեալ կենաց մարդկութեանս: Յայսմ ամենայնի պարտ է գոհանալ զաստուծոյ և ակն ունել բարի հատուցման ճշմարիտ հաւատացելոց յաստուած և անուանելոց քրիստոնեայս՝ ի ձեռն գոյման սուրբ հոգւոյն շնորհաց: Վասն այսորիկ երանելիքն յիւրաբանելիւր ժամանակս ընկալան խընդութեամբ զ՝ ի վերայ 3) եկեալ նեղութիւնս, բոլոր գունդք սրբոցն խսկզբանէ, և գոհութեամբ համբերեցին՝ դառն արկածիւք և դժբնդակ կրիւք տանջեալ և չարչարեալ ի չարաբարոյ բնութիւնակցաց 4), ելին յաշխարհէ աստի, այլում գաւառի և ժառանգութեան աներկբայ յուսով ակն կալեալ, այսինքն է՝ երկնից արքայութեան, յորում ծագեն արգարքն իբրև զարեգակն, տեսանելով զարեգակն արդարութեան Քրիստոս, ի նմանութիւն նորա նորոգեալ ժառանգաստուծոյ հաւր գոլով, պայծառացեալ ի հոգւոյն սրբոյ, յանսպառ և յանվախճան ուրախութիւնս յայսոսիկ: Եւ վասն սորին կենաց ամենայն գառնութիւն նեղութեանցն քաղցր և հեշտալի թուէր հալածելոյն— Քրիստոսի աշակերտացն և նոցունց աշակերտելոցն, բոլոր դասու սրբոցն, որոց ոչ գոյր թիւ՝ յայնցանէ, որք համարէին զինքեանս իրաւս յանիրաւութեան, վասն որոյ և բարկութիւն աստուծոյ մնայ ի վերայ նոցա ի լսելն զբանն Քրիստոսի՝ երթայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենից: Եւ սցս է վիճակ ժառանգու-

1) Ա. յսպէս բնագրում:

2) Զ. ծ ա ծ կ ու թ իւ ն. Մե ն ք կ արգ աց ի ն ք ծ ա ծ կ ու թ ի, փոխանակ կարգալու ծ ա ծ կ ու թ իւ ն:

3) Զ. զ ի վ եր ա յ:

4) Զ. Թ երև ս կ արե լի էր կ արգ ալ և բնութե նակցաց:

թեան ամենայն անիրաւաց: Եւ այն է բաժին բարի յայնմանէ, որ առնէ իրաւունս զրկելոց, յորմէ ոչ վերջացի հետևողն շաւղաց արդարութեան ո՞րք և իցէ և յորմէ իցէ ընթացողն և հակառակեալն:


Արդ զայսոցիկ սակաւ բանից յայտարարութիւն՝ ոչ եթէ վայրաբար և առանց խորհրդոյ, կամ վարկպարագի 1) մտածութեամբ, կամ մարդահաճոյ լինելով արարի իմով ձեռամբ, քեզ, որ լսեսդ, այլ զի գիտացես զինէն ստուգագոյն, վերծանելով զվերոյգրեալս, ընդունակ 2) գտլով բարեպաշտութեան ի ստորասութիւն, այսինքն՝ ճշմարիտ ի հաւատոս Քրիստոսի աստուծոյ և ոչ ընդունող ոչ-խոստովանողացն զՔրիստոս և զիւր բարեգործութեան աւանդութիւնս: Զբոլոր աւրինագրութեան ճշմարտութիւնն առանց ամենայն կարծեաց ընկալեալ և ընդունիմ առաջի աստուծոյ և հրեշտակաց սրբոց, ի բոլոր սահմանեալ ամբարշտացն դաւանութեանց հետի գտլով, ըստ յառաջագոյն գրելոց վասն նոցա: Եւ այժմ՝ նոյն եղիցի վճիռ. եթէ հաւանեալ որք և հաւատացեալ յինէն գրելոցդ, գոհութիւն աստուծոյ, և ես ասացից՝ Անիծեալ որ դնէ զյոյս իւր (ի) մարդ և ոչ ի տէր աստուած երկնի և երկրի, և անիծեալ որ յուսա(յ) ի դաւրութիւն բազկի իւրոյ:


Կատարեցաւ ձեռնարկ հաւատարմութեան ճշմարիտ և ուղղափառ խոստովանութեան երջանկին այնորիկ հաւր մերոյ Անանիայի:


1) 2. վարկ պարագ ի մտած...

2) 2. գունակ:

A 5815







[12]

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0022523

A $\frac{\pi}{5816}$